ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«31» հունվարի 2018 թվականի № 12-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 122 և 2017 թվականի նոյեմբերի 21-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2705 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի հունվարի 16-ի թիվ Ֆ-04/18 գրությունը, «ԹԱԴՇԵՆ» ՍՊ ընկերության 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 06/17գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. **«ԹԱԴՇԵՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/577 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի 1-ին տեղամասը՝** 1.X=4481442 Y=8379294 2.X=4481492 Y=8379268 3.X=4481560 Y=8379336 4.X=4481556 Y=8379406 5.X=4481422 Y=8379406 և 2-րդ տեղամասը՝ 1.X=4481890 Y=8378880 2.X=4481932 Y=8378986 3.X=4481960 Y=8379074 4.X=4481910 Y=8379090 5.X=4481878 Y=8379068 6.X=4481860 Y=8379068 7.X=4481820 Y=8379112 8.X=4481796 Y=8379090 9.X=4481804 Y=8379034 10.X=4481820 Y=8379030 11.X=4481850 Y=8378988 12.X=4481858 Y=8378952 13.X=4481846 Y=8378904 14.X=4481866 Y=8378904 **(տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 1-ին տեղամասում 73625.9 մ³ և 2-րդ տեղամասում 105306.5 մ³, ընդհանուրը՝ 178 932.4 մ³ պեմզային տուֆի մարվող**

պաշար և լեռնահատկացման թիվ L-577 լեռնահատկացման ակտը՝ 1-ին տեղամաս՝ 1.X=4481399 Y=8379313 H=1493.0 (h=0) 2.X=4481492 Y=8379268 H=1490.0 (h=0) 3.X=4481568 Y=8379274 H=1491.0 (h=0) 4.X=4481556 Y=8379406 H=1503.0 (h=-10.0) 5.X=4481422 Y=8379406 H=1489.5 (h=-6.5) և 2-րդ տեղամաս՝ 1.X=4481890 Y=8378880 H=1501.0 (h=0) 2.X=4481932 Y=8378986 H=1502.0 (h=0) 3.X=4481960 Y=8379074 H=1502.0 (h=0) 4.X=4481844 Y=8379134 H=1495.0 (h=0) 5.X=4481788 Y=8379100 H=1495.0 (h=0) 6.X=4481804 Y=8379034 H=1492.0 (h=0) 7.X=4481820 Y=8379030 H=1496.0 (h=0) 8.X=4481850 Y=8378988 H=1501.0 (h=0) 9.X=4481858 Y=8378952 H=1501.0 (h=0) 10.X=4481846 Y=8378904 H=1495.0 (h=0) 11.X=4481866 Y=8378904 H=1501.0 (h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 4.16 հա (1-ին տեղամաս՝ 1.9 հա և 2-րդ տեղամաս՝ 2.26հա) տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 3406.9 մ^3 պեմզային տուֆի պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -577 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ- 577 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ